



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63,  
Էլ.փոստ [kotayk@mta.gov.am](mailto:kotayk@mta.gov.am)

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ  
ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

*Միրելի՛ մանկավարժներ, թանկագի՛ն աշակերտներ, հարգարժա՛ն ծնողներ*

Ջերմ բարենադթանքներով ի սրտե շնորհավորում եմ բոլորիդ՝ նոր ուսումնական տարվա մեկնարկն ավետող՝ Գիտելիքի, գրի ու դպրության օրվա կապակցությամբ:

Դարեր շարունակ ապավինելով Լուսավորչի կանթեղի զորությանը և մեծագույն պատկառանք ունենալով գրի ու դպրության հանդեպ՝ մենք անաղարտ ենք պահել ազգային ոգին ու հաջողությամբ հաղթահարել մեր դեմ ծառայած բոլոր փորձությունները:

Համոզված եմ, որ մարզի նվիրյալ մանկավարժները այսուհետ ևս պատվով կիրականացնեն իրենց առաքելությունը, և մեր համատեղ ջանքերի շնորհիվ կձևավորվի արդի պահանջների ոգուն համահունչ, խոր և կայուն գիտելիքներով օժտված սերունդ:

Միրելի աշակերտներ՛ր, վստահ եմ, որ անշեղորեն հետևելու եք մեր հայրենապաշտ նախնիների ընտրած ուղուն, և կարողանալու եք զորակցել մեր անկախ պետության զարգացմանն ու հզորացմանը:

Մեկ անգամ ևս շնորհավորելով բոլորիդ՝ առանձնահատուկ սիրով ու ջերմությամբ բարենադթանքներ եմ հղում գիտելիքի զարմանահրաշ աշխարհի դռները նոր բացող մեր առաջին դասարանցիներին:

Հարգանքով՝

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ